

**ՊԱՏՄԱԿԱՆՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԿԱՆԸ
ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ա. Ս. ՇԱՐՈՒՐՅԱՆ

Պետրոս Դուրյանը գրել է պատմական ութ թատերախաղ, որոնցից պահպանվել ու տպագրվել են «Սև հողեր կամ Հետին գիշեր Արարատյան», «Արտաշես Աշխարհակալ»¹, «Անկումն Արշակունի հարստության» և «Ասպատակությունը պարսկացի Հայս կամ Ավերումն Անի մայրաքաղաքին Բագրատունյաց» ողբերգությունները: Սրանցից առաջինը հեղինակվել է 1868, երկրորդն ու երրորդը՝ 1869, չորրորդը՝ 1870 թթ.²:

Շատ է գրվել այս ստեղծագործությունների մասին: Հատկապես սովետահայ գրականագետների աշխատություններում հանգամանորեն խոսվել է գրողի ողբերգությունների գաղափարա-գեղարվեստական արժանիքների մասին, հիմնավորապես քննվել ու լուծվել է գրական ուղղության խնդիրը: Հասկանալի է սակայն, որ պատմական թատերախաղերում պետք է որոնվի նաև այն հարցերի պատասխանը, թե արդյոք չի՞ խեղաթյուրված պատմական իրականությունը, ճիշտ է վերարտադրված անցյալը, ի՞նչ աղբյուրներից է օգտվել հեղինակը: Բսկ այս խնդիրներին դուրյանագետներն անդրադարձել են հարևանցի:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե Դուրյանի ողբերգություններում պատմական քիչ բան կա: Հեղինակը որպես կանոն չի նշում ո՛չ գործողության ժամանակը, ո՛չ էլ վայրը, հերոսների անձնական փոխհարաբերություններն ասես ճշշում են պատմական իրողությունների վրա: Բայց դա խաբուսիկ տպավորություն է:

Դրողի հայտնի ողբերգություններն ստեղծված են 3 տարում (1868—70): Գործից գործ Դուրյանն աճել է, ավելի ու ավելի մտահոգվելով պատկերվող ժամանակաշրջանի Նշմարտացի արտացոլմամբ:

Քննենք այդ գործերը ժամանակագրական կարգով:

«Սև հողեր կամ Հետին գիշեր Արարատյան» ողբերգությունը պատկերում է Սեբաստիայի գրավումը (1403 թ.): Թատերախաղի հերոսներից միայն Լանկթիմուրն է պատմական անձնավորություն: Բայց սա չի նշանակում, թե ողբերգությունը զուրկ է պատմական հիմքից:

Հայտնի է, որ Լենկթևմուրի արշավանքների մասին գրել է XIV դարի վերջի և XV դարի սկզբի պատմիչ Թովմա Մեծոփեցին: Սա պատմում է, որ երբ թաթարները հասել էին Սեբաստիա, բնակիչները չեն համաձայնել հանձնել քաղաքը: Բայց «անողորմ բռնավորը» խաբում է նրանց, ասելով. «Մի երկնջիք,

¹ Տպագրված է «Արտաշես Ա» խորագրով:

² Պ. Դուրյանի ողբերգությունների գրության թվականների մասին կան հակասական կարծիքներ: Ե. Դուրյանի վկայությունը («Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 1, էջ 170), ինչպես նաև գրողի կենսագրության օրոք տպագրված կենսագրությունը (Ե. Ե. «Գրական թերթ», 1968, № 9) թույլ են տալիս որոշել ստույգ տարեթվերը:

դի ով դձեղ սրով սպանան՝ սուր նոցա ի սիրտս նոցա մտանէ»³։ Այնուհետև պատմիչը վկայում է, որ բնակիչները հավատում են այդ խոստմանը և ուրախությամբ ու ցնծությամբ բացում քաղաքի դռները։ Իսկ թշնամին սկսում է աղքատներին գերեզմաններին շարչաբերով հափշտակել դանձերը։ Կանանց կապում էին ձիերի պոչերից և ձիերին ազատ արձակում։ Մարդկանց թաղում էին կենդանի-կենդանի, և տառապյալների աղաղակը երկինք էր հասնում։

Այս իրողությունները հիմնական գծերով արտացոլված են նաև Դուրյանի թատերախաղում։ Այստեղ ևս թաթար պատգամավորը հայտնում է ինքնակալի կամքը. «Լանկթիմուր տիեզերակալ... կերդնու յերկնիս, որ եթե Սեբաստիա անձնատուր ըլլա, երբեք սուր չպիտի շողացնե հայոց գլխուն վրա» (արարված Բ, տեսիլ Ե)։ Բայց Սեբաստիայի իշխան Նորայրը չի հավատում թշնամու խոսքին և ընդունում է մարտահրավերը։ Միայն զորապետ Վաչեի դավաճանությամբ է, որ քաղաքը անձնատուր է լինում («Մատնություն» արարվածը) և ապա սկսվում է կոտորածն ու ավերը։

Ո՛չ հայ, ո՛չ էլ օտար պատմագիրների աշխատություններում որևէ հիշատակություն չկա այն մասին, թե Սեբաստիան գրավվել է դավաճանների օգնությամբ։ Ստեղծելով ուրացող Վաչեի կերպարը, Դուրյանը շեղվել է պատմական փաստից, բայց գա բացատրելի է դառնում, եթե նկատի ենք առնում գրողի աշխարհայացքը։ Ժամանակի այլ գործիչների նման, 17-ամյա թատերգակր Նույնպես համոզված էր, որ Հայաստանին բաժին ընկած դժբախտությունների դժբախտոր ալատճառը անմիաբանությունն ու դավաճանությունն է։

Կարելի է կարծել, թե Դուրյանն օգտվել է Մեծոփեցուց։ Բայց մի փաստ ցույց է տալիս, որ նրա համար հիմնական աղբյուր է ծառայել Մ. Չամչյանի պատմությունը։ Ողբերգությունը ունի երկու վերնագիր՝ «Սև հողեր կամ Հետին գիշեր Արարատյուն»։ Ամենևին ուշադրություն չի դարձվել «Սև հողեր» անվանմանը ըստ երևույթին այն համարելով պատկերավոր արտահայտություն։ Իրականում դա պատմական տեղանունն է։ Չամչյանը, վկայակոչելով օտար պատմագիրներին, հաստատում է Մեծոփեցու հաղորդած տեղեկությունների վավերականությունը։ Մասնավորապես, հենվելով Քալկոտյուղես հույն պատմիչի մի աշխատության վրա, նա գրում է. «Իսկ ղմանկունս քաղաքին զամէն ետ ժողովել ի դաշտավայրի կապեալ ձեռօք և ոտիւք և կոխան երիվարաց առնել իբրև զորայս ընդ կամնասայլիւք, որոյ վասն և տեղին կոցաւ և կոչի Սև հողեր»⁴։

Այս հատվածը ոչ միայն բացատրում է թատերախաղի խորագրի իմաստը, այլև ցույց է տալիս, որ Դուրյանն օգտվել է Չամչյանից, քանի որ միայն նրա պատմության մեջ է հիշված այդ փաստը։

«Սև հողեր. . .» երկի կերպարների մեծ մասը պատմական չէ, բայց պատմականորեն ճիշտ է ներկայացված։ Թե՛ Մեծոփեցու և թե՛ Չամչյանի հիշատակած պատմական անձնավորությունները (Արծկեի Վաղին իշխանը, Չաքարիա իշխանը, մշեցի կինը և այլն) նահատակվում են հանուն կրոնի «փառավորելով զանուն Հիսուսի Քրիստոսի», մինչդեռ Դուրյանը կրոնի հարցը

³ «Պատմութիւն Լանկ-Քամուրայ ե յաշորդաց իւրոց, արարեալ Քովմա վարդապետի Մեծոփեցւոյ», Փարիզ, 1860, էջ 64։

⁴ «Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, յօրինեալ ի Հայր Միքայել վարդապետի Չամչեանց Կոստանդինուպոլսեցւոյ», հատ. Գ, 1786, ի Վէնետիկ, էջ 429 (ընդգծումն իմն է — Ա. Շ.)։

ամենևին չի ընդգծում, և նրա հերոսները (Նորայր, Վաղինակ, Լադենիկ, Ներսես, Երանյակ) պատրաստ են մեռնել հայրենիքի համար: Մի երկրորդ հանգամանք ևս, որ մյուս թատերախաղերում արդեն վերաճում է աշխարհայացքային բմրանման, այն է, որ Դուրյանը իսկական հայրենասիրությունը տեսնում է հասարակ դինվորի մեջ՝ արարված Բ, տեսիլ Ա):

Գրականագետները Լանկթիմուրի կերպարի առնչությամբ հաճախ են կրճատմբել Դուրյանին: Այսպես, Ա. Չոպանյանը գրել է. «Լանկթիմուրը... փիլիսոփա Լանկթիմուր մըն է, գրապիտության համալսարանն վկայական առած, որ կխորհրդածե, կրանառտեղծե, տեսլական մըն ունի, հայ մատնիչները կը պատժե և դերադույն փափկություն մը, գրեթե շուղելով կառուցողական Հայաստանը»⁵: Վ. Թերզիբաշյանը ևս, նկատի առնելով թատերախաղի եղրափակիչ տեսիլը (ուր նաղենիկը դատապարտյալ հորը նախընտրում է «տիեզերակալ ալիք»՝ Լանկթիմուրից, իսկ հայրենիքը՝ հորից), Լանկթիմուրի կերպարը «բավականաչափ աղնվացրած, համարյա իդեալականացված է» համարում⁶: Դուրյանը նպատակ չի ունեցել մեղմել «մահաշունչ վիշապի» բնավորությունը: Ողբերգությունում ևս Լանկթիմուրը արնածարավ ու անագորույն մի բռնակալ է (արարված Բ, տեսիլներ Զ և Լ), բայց հեղինակը ձգտում էր նույնպես ներշնչել դավաճանության նկատմամբ: Դրա համար է, որ Լանկթիմուրը պատժում է Վաղին («Այն որ իր բնիկ աղզը կմատնե, անշուշտ օտար ազգ մ'ալ կմատնե») և, ընդհակառակն, ուղում էր ասել, որ իսկական հայրենասիրությունը կարող է հուղել նաև դահճին:

Պատմականի և ստեղծականի փոխհարաբերության հարցը շատ ավելի բարդ է «Արտաշես Աշխարհակալ» երկում: Վ. Թերզիբաշյանը արտահայտել է այն կարծիքը, որ «Բեռնիկի սյուժեն առնված է մեր պատմագիրներից», բայց «կառուցված է հեղինակի ստեղծագործական երևակայությամբ», որ այն «ոմանտիկ մի սիրավեպ է՝ ողբերգական վերջավորությամբ», որ ըստ էության այդ գործը «պատմական քիչ բան ունի» և այլն⁷: Իսկ գրականագետ Գ. Ստեփանյանը որոշակի պնդել է. «Պիեսում նկարագրվող և՛ դեպքերն են պատմական, և՛ դեմքերը» ու թեև, հակառակ պատմությանը, պատկերված է, թե Արտաշեսն է գերել Կրեսոսին, այնուամենայնիվ «Արտաշես Աշխարհակալը» «լիարժեք պատմական ողբերգություն է»⁸:

Ինչպես կտեսնենք, հշմարտությունը Գ. Ստեփանյանի կողմն է:

Հայտնի է, որ Արտաշես Աշխարհակալի մասին խորենացու հաղորդած տեղեկություններում ամեն ինչ չէ. որ հստակ է: Չամչյանը, որ ջանում էր հայ պատմիչների վկայությունները ճշտել կամ ճշտացնել, դիմել է օտար հեղինակներին: Բայց Արտաշեսի խնդրում ստեղծել է սովելի մեծ շփոթ: Այսպես, նա խոսում է Մեծ Հայքի կուսակալ կամ բղնջի Արտաշատի կամ Արտաշիասի մասին, որը փորձեց գրավել Մոփքը և մահացավ՝ գահը թողնելով Արտավազ-

⁵ Արշակ Չոպանյան, Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը, Երևան, 1967, էջ 110:

⁶ Վ. Թերզիբաշյան, Պետրոս Դուրյան, Երևան, 1969, էջ 43: Ուսումնասիրողը ենթադրում է, որ Դուրյանը հետևել է իր ուսուցիչ Սրապիոն Թղլյանի «Լանկթիմուր» ողբերգությանը՝ իրականում «Ան հողերը...», ինչպես վկայում է Ի. Դուրյանը, ստեղծվել է բոլորովին անկախաբար (տե՛ս «Երաներ Երևանի համալսարանի», 1967, № 1, էջ 166):

⁷ Նույն տեղում, էջ 39 և 40:

⁸ Գ ա ո Ն ի կ Ա տ Վ ան յ ա ն, մտավորի արևմտահայ թատրոնի պատմության, հատ. առաջին, Երևան, 1962, էջ 413:

.11 Հանդես, № 4

դին: Ապա Չամչյանը գրում է Վաղարշակի թոռ և Աբշակի որդի Արտաշես Ա-ի մասին, որը շարժվեց Արևմուտք ու նվաճեց Փոքր Ասիան և վերագարձին սպանվեց ապստամբած զորքերից: Կա նաև ականներ, որոնք պատերազմող Արտաշես Թ թագավորը: Ճիշտ է, որոշ պատմաբաններ հաստատում են, որ այս երեք Արտաշեսներն էլ միևնույն անձնավորությունն են՝ Արտաշիսյան հարստության հիմնադիր Արտաշես Ա-ն կամ Աշխարհակալը (189—160)⁹, բայց բնական է, որ 18-ամյա Դուրյանը չէր կարող կողմնորոշվել այդպիսի կնճռոտ խնդրում: Ուստի թատերագիրը իր ստեղծագործության նյութ է դարձնում հորենացու պատմության՝ Արտաշեսի տիեզերակալության հետ առնչվող փաստերը: Նախորդ ողբերգության քննությունից արդեն պարզեցինք, որ Դուրյանը ծանոթ էր Չամչյանի պատմությանը: Բայց «Արտաշես Աշխարհակալ» պիեսում նա վրստահում է ոչ թե միսթարյան հեղինակին, այլ Պատմահորը: Չամչյանը իր աշխատության ծանոթագրություններում ընդունում է Հերոդոտի վկայությունը և պնդում, որ Գրեսոսը ոչ թե Արտաշեսի, այլ Կյուրոսի ժամանակակիցն էր, բայց Դուրյանը անվերապահորեն հավատ է ընծայել հորենացուն, որովհետև սա ևս հիմնվել է օտար մատենագիրների՝ Պոլիկարտեսի, Եվագարոսի, Փղեգոնիոսի և այլոց վրա (Բ, Ժգ): Նույնիսկ անվան հարցում նա վերցրել է ոչ թե Չամչյանի օգտագործած Կրեսոս ձևը, այլ քերթողահոր Կրյուսոսը (Կրիսոս):

Եթե «Սև հողեր...» պիեսում միայն Լսնկթիմուրի կերպարն էր պատմական, ապա այստեղ գլխավոր անձանց մեծ մասը (Արտաշես Ա, Տիգրան Բ, Կրյուսոս, Միհրդատ, Վարաժ) այդպիսին է: Նույնիսկ այն դեպքում, երբ թատերգակր ստեղծել է նոր կերպարներ, նա մտահոգվել է դրանց սլատմական հիմքով: Օրինակ, ողբերգությունում քրմապետն է Վահրամ Վահունին: Այդպիսի անձ չի հիշված պատմության մեջ, բայց լսվ հայտնի է, որ Վահունիները կամ Վահունիները սերում էին Վահագնից և քրմեր էին, ուստի հեղինակը հարադատ է մնացել պատմության բզուն: Նույնը պետք է ասել նաև Լյուդացիների քրմապետ Պյութոսի մասին: Այս կերպարն ստեղծելու համար Դուրյանը հիմք է ընդունել հորենացու պատմության հետևյալ հատվածը. «Լյուդացիների հրպարտացած Կրյուսոսին մոլորության մեջ էր գցում Պյութիայի գուշակը...» (Բ, Ժգ):

Ողբերգությունում, իրոք, պատմական շատ բան կա: Հապա Որմզդուխտի և Արշեղի կերպարները, մի՞թե հայոց թագավորի և պարսկուհու փոխհարաբերությունները պատկերված են «ռոմանտիկ սիրավեպ» ստեղծելու նպատակով: Իհարկե ոչ: հորենացին, նկարագրելով Արտաշեսի նվաճումները, Աշխարհակալի վախճանի մասին ույսպես է գրում. «Բայց չեմ կարող ասել, ի՞նչ բանի ազդեցությամբ, ահագին աղմուկ և շփոթություն է ծագում, և բազմաթիվ զորքերն սկսում են միմյանց կոտորել. իսկ Արտաշեսը փախչելիս մեռնում է, ինչպես ասում են՝ իր զորքերից...» (Բ, Ժբ): Այստեղ Արտաշեսի մահվան որևէ կոնկրետ պատճառ չկա, բայց կարող էր արդյոք Դուրյանը, որ իր ողբերգություններում, ինչպես ճիշտ նկատել է Ս. Սարինյանը, որոնում էր «ազգային դժբախտության պատճառները»¹⁰, չմեկնաբանել մեռնող Արտաշեսի պատմությունից ավանդված վերջին խոսքերը. «Ավաղ փառացս անցավորի»: Այդ սի-

⁹ Տե՛ս Չ. Գ. Ժամկոչյան, Ա. Գ. Արաշահյան, Ս. Տ. Մելիք-Բախչյան, Հայ ժողովրդի պատմություն, հատ. 1, Երևան, 1963, էջ 159—162:

¹⁰ Ս. Ն. Սարինյան, Հայկական ռոմանտիզմ, Երևան, 1966, էջ 366:

ժափկույր Արտաշեսի եղերական վախճանի զեղարվեստական, ումանտիկական պատճառարանությունն է։ Սա պատմականություն յուսակեալից կարող է մեկ չղոհացնել, բայց կարևորն այն է, որ այդ «սիրավիպուր» ինքնանպատակ չէ։

Սովետահայ քննադատությունը Դուրյանի պատմական թատերախաղերից ամենից արժեքավոր համարել է «Անկումն Արշակունի հարստության» ողբերգությունը, դրա մեջ իրավացիորեն տեսնելով հեղինակի դժմոկրատական աշխարհմարտնման առավել կատարյալ արտահայտությունը: Ինչ վերաբերում է ստեղծագործության պատմականությանը, ապա դարձյալ արվել է վերապահում: «Պիեսի սյուժեն... հիմնականում կառուցված է սիրային վիպական մի ռոմանտիկ պատմության վրա, բուն պատմական տարրը զրավում է երկրորդական տեղ...»¹¹: Ողբերգությունում իսկապես մեծ տեղ է հատկացված Արտաշեսի սիրային տարփանքներին՝ կապված Շահանդուխտի հետ: Այդ «սիրային պատմությունը» պատմական փաստի տեսակետից ճիշտ չէ, բայց պատմականության առումով միտնդամայն ճշմարտացի է: Թատերախաղը պատկերում է Արշակունյաց վերջին թագավորի՝ Արտաշես կամ Արտաշիր -ի զահակալության ժամանակները և այդ թագավորության վերացումը (428 թ.): Բայց չէ՞ որ պարսից Վռամ Բ թագավորը վերացրեց հայ պետականությունը, որովհետև «...Հայոց Արտաշես թագավորը սկսեց թագվել անշափ անուռակ ցանկությունների մեջ, որ բոլոր նախարարները նրանից զգվեցին: Նրանք եկան մեծն Սահակի մոտ, բողոք բարձրացրին և նրան էլ հրավիրեցին իրենց օգնելու, որպեսզի (Արտաշիրի) վրա շարախոսեն Պարսից թագավորի առաջ, իրենց թագավորին դեն գցեն և պարսիկ բերեն աշխարհին կառավարող» (Խորենացի, Դ, 44): Կաթողիկոս Սահակ Պարթևը չի միանում նրանց: Բայց նախարարները «միարանությամբ ելան դնացին Պարսից Վռամ թագավորի մոտ, մի ոմն փառամուլ քահանայի, Արծկեացի Սուրմակի հետ, շարախոսելու իրենց Արտաշիր թագավորի վրա և մեծն Սահակի վրա, թե նրանք հույների կողմն են թեքվել» (նույն տեղում): Այս ամենը հարադատորեն վերարտադրված է Դուրյանի ողբերգությունում: Թատերախաղի հերոսներից պատմական են Արտաշիրը, Վռամը, Սահակ Պարթևը, Արծրունյաց Վաչե իշխանը, Աշոցա իշխան Հմայակը, Սուրմակը, Սուրեն Պահլավը: Գլխավոր կերպարներից հնարավոր են Շահանդուխտը, Հրաչյան, Հերանուշը, Բարկը: Բայց այս անձանց զոյությունը չի հակասում պատմականությանը, քանի որ դրանց միջոցով ցույց են տրված ժամանակաշրջանի սոցիալական հակասությունները: Դուրյանը չի արգարացնում իշխանների վարքագիծը և Փառնեսեսին ու մյուսներին հակադրում է ծեր զինվոր Բարկին, որ մինչև հոգու խորքը վիրավորված է արքայից, բայց ոչ հայրենիքից: Դուրյանի զաղափարակիր Սահակ Պարթևն ասում է. «Այո՞, Արտաշիր հանցավոր է, բայց թող Արշակունին չլլա հանցավոր..., Այո՞, Արտաշիրը կոպտուպանիս, բայց հայուն իշխանությունը պահելու համար» (արարված և), տեսիլ Դ, արարված Զ, տեսիլ Գ):

Ուրեմն «Անկումն Արշակունի Հարստության» ողբերգությունում ևս Դուրյանի ստեղծագործական երևակայությունը առկա է, բայց առավել, քան նախորդ գործերում, ենթարկված է պատմության տրամաբանությանը, չի խախտում պատմականությունը:

11 4. Թ Կ Ր Պ Ի Ր Վ Ղ Դ Վ Ն, ՆՂԻԸ. ՎՂԻՍ., Էջ 47.

Եթե «Սև հողեր...» երկում ատաղձն է միայն պատմական, իրական գիտությունը հարմարեցված են հեղինակային կոնցեպցիային, իսկ «Արտաշես Աշխարհակալ» պիեսում ուսմանտիկոսն քաղաքացիական պատմական իրողությունները, ապա «Անկումն Արշակունի հարստության» ողբերգությունում լիովին պահպանված է պատմականությունը:

Քայց թերևս Դուրյանի պատմական թատերախաղերից ոչ մեկն այնքան նյութ չի տալիս խոսելու պատմական դեպքերի ու դեմքերի նկատմամբ ստեղծագործական մոտեցման, հեղինակի պատմահայեցողության մասին, որքան «Ասպատակությունը պարսկացի շայս կամ Ավերումն Անի մայրաքաղաքիև Քաղրատունյաց» ողբերգությունը:

Թատերախաղը բաժանված է «երկու թվականի», որոնցից յուրաքանչյուրն ունի իր գործող անձինք: Այստեղ ևս, ինչպես մյուս ստեղծագործություններում, չեն նշված թվականները:

«Ա թվականում» խոսքը գնում է սելջուկների արշավանքի մասին: Տուղրիլը և իր զորապետ Աբասը հիշում են, թե ինչպես են կործանել Սմբատաբերդն ու Արծնը: Կարսի թագավոր Գաղիկ Աբասյանը և Թաթուլ իշխանը հակահարված են տալիս թշնամուն: Կովում Գաղիկը աշատվում է, իսկ Թաթուլը ծանր վիրավորելով Արսուրան Ամիրայի որդուն, գերի է ընկնում: Այս ամենը իրական է, և կարելի է վերականգնել պատմական իրողությունների ստույգ ժամանակն ու հաջորդականությունը: Սելջուկ թուրքերը մահել են Բարձր Շայք և 1048 թ. ապրիլի Մանանաղի դավադրի Սմբատաբերդը, իսկ Կարինում՝ Արծն խոշոր քաղաքը: Վեց տարի հետո սելջուկներն իրենց ասպատակությունները վերսկսել են և շարժվել Կարս: Ինչպես որ ողբերգության «Ա թվականում» ծավալվող գործողությունները տեղի են ունեցել հենց 1054 թ.:

«Ա թվականի» գործող անձանցից պատմական են Գաղիկ Աբասյանը, Թաթուլը և Տուղրիլը: Սրանցից կենտրոնական հերոսը Թաթուլն է, որի մասին տեղեկություններ է հաղորդում Արիստակես Լաստիվերտցին: Քննությունը ցույց է տալիս, որ Դուրյանը օգտվել է ամենից առաջ Լաստիվերտցուց (ներառառ «Պատմությունը» առաջին անգամ լույս է տեսել Վենետիկում, 1844 թ.), ապա և Չամչյանից: Այսպես, Չամչյանը պատմում է, որ Գաղիկ Աբասյանը վերահաս վտանգին դիմադրավելու համար ժողովել էր «զքաջագուն իշխանս հայոց հանդերձ սպարապետսն՝ ու կոշիւր Բաթուլ՝ այր հզօր և անպարտելի...»¹²: Ինչպես տեսնում ենք, Թաթուլը համարված է սպարապետ, իսկ Դուրյանի ողբերգությունում նա սպարապետ հանդես է գալիս որպես «իշխան շայկազն», ըստ որում թատերադրվող հետևել է Լաստիվերտցուն, որն ուղղակի անվանում է «զմի ոմն յադատացն»¹³: Սա շատ հարմար էր Դուրյանի ըմբռնումներին, որովհետև ավելի տպավորիչ կլիներ «ոմն» հայ իշխանի հայրենասիրությունը, քան սպարապետի, որն ի սաշտոնն պարտավոր էր քաջ լինել:

Լաստիվերտցու «Պատմությունում», Տուղրիլ անունը չկա, կա միայն «Սուլտան» ձևը, իսկ Չամչյանը ոչ միայն տալիս է անունը, այլև հատուկ անունների բառարանում բացատրում. «Բնկ յազգէ Թուրքաց սկիւթացուց, ի ցեղէ սալխուկեանց»: Անկասկած, Դուրյանը Տուղրիլ անունը վերցրել է Չամչյանից, բայց ինչու է նրան համարում «Թագավոր Պարսից»: Այլ կերպ հնարավոր չէր,

¹² Մ. Չամչյան, նշվ. աշխ., հատ. Բ, 1785, էջ 955 (ընդգծումն իմն է — Ա. Ն.):

¹³ «Պատմություն Արիստակեսի Լաստիվերտցու», Երևան, 1963, էջ 88:

որովհետև սուլթանական Թուրքիայի պայմաններում նա չէր կարող հայերի արնածարավ թշնամուն թուրք կոչել և ստիպված էր պահպանել ավանդական անվանումը (պարսիկներ), ինչպես մեր պատմիչների մոտ է:

«Բ թվականը» վերաբերում է Անիի ղրավմանը:

Ինչպե՞ս է ներկայացնում հեղինակը Անիի առումը:

Տուղրիլից հետո նրա եղբայր Ալփասլանը հասել է Անի և պաշարել մայրաքաղաքը: Պարսիկ (իմա՝ սելջուկ) իշխան Աղկանը լուր է տալիս հայերին, թե «ահագին բաբան մը բերած են, որ 50—60 լիտր ծանրությամբ քար կնետն եղեր» (արարված Բ, տեսիլ Գ):

Բազարատ իշխանը խոստանում է բաբանն այրողին մեծամեծ պարգևներ: Ներկայանում է պատանի Լևոնը և հայտնում, որ ինքը պատրաստ է ոչնչացնել բաբանը: Նա, որպես պատգամավոր, մտնում է թշնամու բանակը, մոտենում բաբանին, այրում: Իսկ պարսից զորապետ Որտեմեղը, որ Անիի պարիսպների տակ խրամատներ է փորել տալիս, բռնվում է և ճանկերով վեր քաշվում: Բազարատը հրամայում է Որտեմեղի գլուխը կտրել և նետել պարսիկների կողմը: Բայց հայոց զորքերի հրամանատար Ապրսամը զավաճանում է, անցնում թըշնամու կողմը, իսկ իշխանները քաշվում են Անիի միջնաբերդը, թշնամին մլտնում է քաղաք ու ավերում:

Ի՞նչ է ասում պատմությունը:

Հայտնի է, որ 1045 թ. Անին արդեն գրավել էին բյուզանդացիները: Դուրյանն այդ շատ լավ գիտեր (ողբերգության Բ արարվածի Գ տեսիլում Բազարատը հիշում է Վեստ Սարգսի ուրացությունը և պանդխտության մեջ գտնվող Գագիկին): Իսկ Անիի նոր անկումը, որ դարձել է Դուրյանի թատերախաղի նյութ, տեղի է ունեցել հետևյալ հանգամանքներում: 1064 թ. Ալփասլանը արշավում է Հայաստան, գրավում Լուին, իջնում Շիրակ և պաշարում Անին: Ալփասլանը բերել է տվել մի զարհուրելի բաբան: Զինվորները զոհվել են քաղաքի: «Եւ թէպէտ վրացին Գրիգոր՝ որ երկրորդ իշխանն էր, բազում հնարազործեաց ընդդէմ բաբանին, այլ ոչ կարաց խափանել զզօրութիւն նորա, և ոչ կարէին ելս հնարիցն գտանել»¹⁴: Վերջապես թշնամին խորտակում է պարսպի հատվածը, բայց փլուզված կողմից հնարավոր չէր քաղաք մտնել: Ուստի Ալփասլանը հրամայում է նահանջել: Իսկ «տկարամիտ» իշխաններ Բազարատն ու Գրիգորը, որ հոգնել էին պատերազմելուց, կարծում են, թե պարսիկները օգնական ուժեր են բերում, ամրանում են նւթնաբերդում, քաղաքացիները մատնրվում են խուճապի: Թշնամին դիտի է ընկնում, վերադառնում և գրավելով քաղաքը, սկսում է կողոպուտը, ավերը, հրկիզումն ու ջարդը¹⁵:

Համադրենք պատմական փաստերը և Դուրյանի պատկերածը: Ծշմարիտ է, որ Անին գիմադրել է, որ Ալփասլանն իսկապես բաբան է բերել, որ իշխանները փոքրոգի են գտնվել, որ Անին գրավվել ու ավերվել է խուճապի պատճառով: Բայց միայն այսքանը: Հաստիվերտցին չի նշել, թե ով էր Անիի իշխանը մինչդեռ Ուռհայեցին ակնարկում («...անօրէն իշխանքն Հոռոմոց՝ զորս կացուցեալ էր թագաւորն պահապանս տանն Հայոց, Բազարատ հայրն Սմբատայ և Գրիգոր Բակուրանին որդին՝ վրացի ազգաւ...»)¹⁶, իսկ Զամչյանը (չմոռանանք,

¹⁴ Մ. Զամչյան, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 979.

¹⁵ Տե՛ս Հաստիվերտցի, էջ 135—136: Մատթևոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 143—149: Զամչյան, հատ. Գ, էջ 979—981.

¹⁶ Ուռհայեցի, էջ 148.

որ նա օգտագործել է այլ աղբյուրներ, ինչպես Սամվել Անեցի, Վարդան պատմիչ) ուղղակի նշում է Թաղրատի՝ ծագումով հայ և Գրիգորի՝ վրացի լինելը: Դուրյանը Ուոհայեցու (սրա աշխատությունը հրատարակվել էր 1869 թ. Երուսաղեմում) կամ Չամչյանի ազդեցությամբ Բաղարատին (հեղինակն ընտրել է տնվան այս ձևը) համարում է հայ: Թայց վրացի իշխանին հանդես չի բերում: Պետք է ենթադրել, որ Գրիգորը նախատիպն է ուղբերգությունում գործող Գուրգեն հայ իշխանի:

Եվ ապա, թատերախաղում կան այլ կերպարներ ևս. պարսիկ իշխան Ադկանը, որ թաքուն օգնում է հայերին, Որտեմեղ զորապետը, որ զերի է վերցվում, պատանի հերոս Լևոնը, որ այրում է բաբանը, Վահրամ քահանան և այլն: Հնարովի՞ են սրանք, հնարովի՞ են պատկերված զեպրերը: Ո՛չ: Սրանք պատմական անձնավորություններ են, բայց գործել են ոչ թե Անիում, 1064 թ., Ալ-փալանի արշավանքի ժամանակ, այլ Մանազկերտի հերոսական պաշտպանության օրերին, 1054 թ., երբ սելջուկ հորդաներին ղիսավորում էր Տուղրիլը:

Ահա մի քանի վկայություններ:

«Արդ մինչդեռ քաղաքն (Մանազկերտը — Ա. Ս.) յայս տարակուսի և ի մտանդի կայր, արկանէր (Աստուած — Ա. Ս.) խորհուրդս բարոք ի սիրտ իշխանի միոջ, որ էր յոյժ ի մտերմաց Սուլտանայ, որ դառ ի նմանէ խորհեալսն ծանուցանէր քաղաքին՝ կամ բանի կամ գրով: Բաղում անդամ դրեալ ի քարտիսի ի սլաք նետին կապէր, և պատերազմի օրինակաւ մերձեալ ի պարիսպն՝ զնետն ի քաղաքն բնկենոյր. և այնու պամենայն կոռոյն օրինակսն ծանուցանէր նոցա, թե՛ Առ վաղին այսպէս և բստ այսմ ձևւոյ է կոռոյն օրինակն. և եթէ յայս նիշ տեղւոյ ի դիշերի կամին ի ներքոյ պարսպին զերկիրն փորել և մտանէյ ի ներքս. բայց դուր պինդ և ամուր կաղէր, և տեղեացն վերայ զգուշացարութեամբ՝ Թշնամին կանգնեցնում է մի մեքենա, բայց մի երեց գտնում է նրա խափանման միջոցը: Ապա բերում են «յոյժ ահագին» բաբանը, որ 60 լիտրանոց քուրեր էր արձակում: Այդ բարերից մեկը բանդում է պարիսպը: Իսկ հաջորդ օրը պարսիկ իշխան Որտեմեղը ուղում է այդ բացվածքից Մանազկերտ մտնել, բայց «յանկարծակի զիրովին երթեալ անկաւ»: Պարսպի վրա կանգնածները երկաթե ճանկեր են նետում, բռնում, վեր քաշում: Այդ ժամանակ էլ ահա «մի ոմն զօրաւոր ի զօրացն Հոռմոց» նալթի և ծծմբի կրակ է պատրաստում, լրցնում շշի մեջ և ձեռնալով թղթաբեր, մոտենում բաբանին, այրում և փախչելով վերադառնում քաղաք»:

Բոլոր այս իրադարձությունները Դուրյանը վերագրել է Անիին, քանի որ հայոց վերջին մայրաքաղաքի ավերումն էր խորհրդանշում հայ պետականության կորուստը: Հեղինակի ստեղծագործական մոտեցումը զրսևորվել է նաև կերպարների խնդրում: Տեսանք, որ Որտեմեղը պատմական անձնավորություն է: Պատմական է նաև հայերին օգնող պարսիկ իշխանը: Լատիվերացին տեսնում է, որ աստծո օգնությամբ է պարսիկն այդպես վարվել: Դուրյանը չէր կարող համաձայնել նման մեկնարանմանը, ուստի և զտել է ողմանտիկ հիմնավորում: Զարմուհու նկատմամբ ունեցած սերն էր Աղկանին դարձրել զավաճան: Թե

17 Լատիվերացի. էջ 91:

18 Նույն տեղում, էջ 92—93: Լատիվերացու տառմուխյան երևանյան հրատարակությունում ցույց է տրված, որ Որտեմեղը (Պուլյաճի մոտ՝ Որտեմեղ) սխալագրում է (որ Դեմիդ)։ Բայց դա հարցի էությունը չի փոխում:

Հաստիվերացու պատմությունում՝ և թե՛ այլ աղբյուրներում՝ հայերին օգնող պարսիկ իշխանն անանուն է։ Իսկ Դուրյանը նրան տվել է Աղկան անունը։ Մյուս կողմից Չամչյանի պատմությունում չկա Որտեմեզ անունը։ Մխիթարյան գիտնականը օգտվելով XI դարի հույն պատմիչ Գեորգ Կեղրենոս Միայնակյացի աշխատությունից, հավաստում է, որ սելջուկներն ունեցել են խորեզմյան մի գունդ, որի հրամանատարն էր Աղկան անունով մեկը, որին և գերի են վերցրել մանազկերտցիները¹⁹։ Դուրյանն ավելի է հավատացել Հաստիվերացուն, որի պատմությունում գերևարված հրամանատարի անուն էր Որտեմեզ, իսկ Չամչյանից վերցրել է սրա զիսատման փաստը, որի մասին հույն պատմիչը ոչինչ չի գրել։ Իսկ Աղկան անունը, որ հանդիպում է միայն Չամչյանի պատմությունում, թողել է անանուն պարսիկ իշխանի համար։

Այժմ դառնանք Լևոնի կերպարին և դրա պատմական նախատիպին։ Հաստիվերացին այս անձնագոհ երիտասարդին համարում է հոռոմ և միայն փաստն է նշում։ Ուռհայեցին ավելի մանրամասն է նկարագրում։ Սրա մոտ այդ պատանին «փռանդ» է, որ ներկայանում է Մանազկերտի բյուզանդացի կառավարիչ Վասիլին և ասում. «Ես ելից և այրեցից դբարանն դայն, և ահա այսօր հեղցի արին իմ ի վերա ամենայն քրիստոնէից, վասն զի ես միայն եմ, ոչ ունիմ կին կամ որդիք, որ լան զիս»²⁰։ Չամչյանի պատմության մեջ այս հերոսը ազգությամբ «ղաղղիացի» է, որ դարձյալ պատրաստ է մահանալ հանուն կրոնի։ Իսկ Դուրյանի հերոսը հայ է (Լևոն), որ սիրում է հայրենիքը և պատրաստ է մեռնել նրա համար. «Այո՛, ես որբ եմ, — ասում է Լևոնը, — ո՛չ հայր, ո՛չ մայր և ո՛չ եղբայր ունիմ, այլ միայն թշվառ հայրենիք մը, ահա այն է հայրս, մայրս ու եղբայրս...» (արարված Բ, տեսիլ Ե)։ Վերը նշված բոլոր աղբյուրներում պատանին բարեհաջող վերադառնում է, մինչդեռ թաուերախաղում Լևոնը իրեն նետում է բաբանի բոցերի մեջ և այրվում։ Հնդկականի միտումն ակնբախ է։ Նա պատմական անցյալին չէր գիմում ինքնանպատակ։ Պատմության հերոսական օրինակներով նա ուզում էր դաստիարակել ժամանակակից սերնդին։ Իսկ բնական է, որ վարակիչ ու ազդեցիկ կարող էր լինել հայ մարդու օրինակը։ Դրա համար աղբյուրներում պահպանված տարբեր վկայություններից և ոչ մեկը չի վերցրել, փոխել է ինչպես հերոսի ազգությունը, այնպես էլ նրան մղել անձնագոհության, որ ավելի է ընդգծում կնրպարի հերոսականությունը։

Մի քանի խոսք ողբերգության մյուս կերպարների մասին։

Տեր Վահրամի նախատիպն, անշուշտ, աղբյուրներում (Հաստիվերացի, Ուռհայեցի, Չամչյան) հիշվող երեցն է (ողբերգության Ա արարվածի Դ տեսիլում տեր Վահրամը մտաբերում է, թե ինչպես մանազկերտցիները «հնարով մը» Տուղրիլի արշավանքների ժամանակ այրել են բաբանը)։ Հնարովի է դավաճան Ապրսամի կերպարը։ Այս դեպքում ես Դուրյանն առաջնորդվել է «Են հողեր...» պիեսից մեզ ծանոթ սկզբունքով։ Ստեղծական ես նաև Զարմուհու, Բաբկենի և մյուս երկրորդական կերպարները։

Դուրյանի կորած թատերախաղերի մեջ հիշատակվել է նաև «Տիգրան Բ» խորագրով մի ողբերգություն։ Սա հինգ մասից կամ «երեկոյթից» բաղկացած մի ստեղծագործություն է, որի առաջին երկու մասերի («Փիննա» և «Ասուղ կամ

¹⁹ Չամչյան, հատ. Բ, էջ 958—959։

²⁰ Ուռհայեցի, էջ 120։

(ևզվաճատն») բովանդակությունը Ա. Զուպանյանի համար շարադրել է Մաքսուտ Միհրդատյանցը: Հենց այդ շարադրանքն էլ հրատարակել ենք մենք²¹:

Իհարկե, «Փիննան» և «Ասուղը» ամբողջական պատկերացում չեն տալիս ողբերգաշարի մասին, բայց հետաքրքրող խնդրի կապակցությամբ դիտարկումների հնարավորություն ընձեռում են:

Համառոտակի հիշեցնենք «Տիգրան Բ-ի» երկու «երեկույթների» բովանդակությունը:

Տիգրան Բ-ն գերի է վերցրել հռոմեական ծերակույտի նախագահի դուստր Փիննային և գիտե, որ պատերազմն անխուսափելի է: Ծովեղբյա սահմանները պաշտպանելու նպատակով նա Միհրդատին հռչակում է Պոնտոսի թագավոր: Հայ-պոնտական դաշինքն ամրապնդելու համար Տիգրանը թագաժառանգ Արտավազդին ամուսնացնում է Միհրդատի դուստր Սիրանուշի հետ: Միհրդատը գրավում է Կապադովկիան՝ թագավորեցնելով իր ութամյա որդի Արիարաթին՝ որպես խնամակալ նշանակելով Գորգիոսին: Կապադովկիայի զահրնկեց արված թագավոր Արիորարդանը դիմում է հռոմեացիների օգնությանը: Կուռնելիոս Նիդդան Ուպիոս դորապետի հետ պատրաստվում է արշավել Տիգրանի դեմ: Դեսպան Մանիոսը հայոց թագավորից պահանջում է Փիննայի աղատումը և մերժում ստանում: Սկսվում է պատերազմը: Տիգրանն իր Միհրան և Բակուր զորավարներին հրամայում է Միհրդատի հետ միասին ջախջախել հռոմեացիներին: Թշնամու կողմն է անցնում Բագրատունի ասպետ Ասուղը, որի լեզուն Տիգրանը կտրել էր տվել կուռքերին չերկրպագելու համար: Միհրդատը վերստին գրավում է Պոնտոսն ու Կապադովկիան և նորից թագավորեցնում Արիարաթին, որին հռոմեացիները զահրնկեց էին արել: Եւ շարժում է Միհրդատի ավագ որդու՝ Փառնակեսի նախանձը, որից խլել էին առաջնության իրավունք: Փառնակեսը դավակցում է Ասուղի, Պոնտոսի իշխան Սուրենի, ծովահենների զլխավոր Կորդիասի հետ, բայց դավաճանությունն իմացվում է, և Միհրդատը ձերբակալում է որդուն: Մինչև հռոմեացի զորավար Կոտտասը պատրաստվում է դիմավորել Լուկուլլոսին, վրս է հասնում Տիգրանը և հրդեհում թշնամու նավերը:

Հենց սկզբից նկատենք, որ Փիննան պատմական անձնավորություն չէ: Ծիշտ է, պատմությունից հատնի է, որ Տիգրան Մեծը Ասորիքում և Փյունիկիայում մղած պատերազմներում պերի է վերցրել Սելևկիայի Սելենե-Կլեոպատրա թագուհուն և Լուկուլլոսի 69 թ. արշավանքից առաջ զլխատել²², բայց դա չի եղել պատերազմի առիթը: Հայ-հռոմեական կոնֆլիկտն սկսվել են Միհրդատի պատճառով, որին Տիգրանը հրաժարվել է հանձնել Լուկուլլոսին: Մրտադածին է նաև Սիրանուշը: Բայց հիմնական կերպարներն ու փաստերն իրական են: Ողբերգաշարի երկու մասերում պատկերված զործողությունները ընդգրկում են հայ-պոնտական դաշինքից (95/94 թթ. մ. թ. ա.) մինչև Քաղկեդոնի մետ Կոտտասի զորքերի ու նավատորմի դի ջախջախումը (77 թ. մ. թ. ա.)²³:

²¹ Տե՛ս «Բաներ Երևանի համալսարանի», 1967, № 1, էջ 175—181:

²² Չամչյան, հատ. Ա, էջ 230: Ակադ. Հակոբ Մուսանդյան, Տիգրան Բ և Հռոմը, Երևան, 1940, էջ 54: Բոլոր թվականները վերցրել ենք վերջին աշխատությունից:

²³ Հնարավոր է, որ հաջորդ մասերում հեղինակն անդրադարձել է նաև հետագա իրադարձություններին (Լուկուլլոսի և Պոմպեոս Կրասոսի արշավանքները, Տիգրանի մահն ու Արտավազդի թագավորելը), բայց այդ թատերախաղերի ճակատագիրն անհայտ է:

Վերը թվարկված բոլոր հիմնական դեպքերի ու դեմքերի մասին գրել է Չամչյանը, այնպես որ Դուրյանը տառալեկապես օգտվել է նրա պատմությունից: Պատմական անձնավորություններ են Տիգրան Բ-ն, նախ փոխարքա, ապա և Պոնտոսի թագավոր Միհրդատը, Կապադովկիայի թագավոր Արիոբարզանը, թագաժառանգ Արտավազը, արքայորդի Տիրանը, Բագրատունի իշխան Ասուգը, զորապետներ Բակուրը, Միհրանը, Կոռնելիոս Սիդդան, Ուլպիոսը, Կոտտասը, դեսպան Մանիոսը, Պոնտոսի թագուհի Արտաշաման, Լուկուղոսը, Միհրդատի որդի Փառնակեսն ու Արիարաթը, խնամակալ Գորգիոսը: Դատելով ուղբերգաչարի երկու մասերի բովանդակությունից, թատերագիր դարձյալ փաստերի նկատմամբ հանդես է բերել ստեղծագործական մոտեցում: Օրինակ, Չամչյանը հաստատում է, թե Կոտտասի նավատորմը խորտակել է Միհրդատը. իսկ Դուրյանը, ջանալով ավելի հերոսականացնել հայ թագավորին, վերագրել է Տիգրանին: Հեղինակը որոշ տեղեկություններ քաղել է հորենացուց: «Ասուգ» «երեկոյթում» հանդես է բերված Պոնտոսի Արտաշամա թագուհին: Չամչյանը այս անունը չի հիշատակում, բայց Դուրյանը, հենվելով հորենացու վկայության վրա (Բ, ժա), ստեղծել է նրա կնրպարը:

Մենք քննեցինք Պետրոս Դուրյանի բոլոր հայտնի ողբերգությունները: Դրանք հավաստում են, որ թատերգակը քաջածանոթ էր պատմական աղբյուրներին, որ պատմականի հետ նրա երկերում առկա է ստեղծականը, ընդ որում այս վերջինը միշտ էլ պայմանավորված է հեղինակի պատմահայեցությամբ, իսկ «Անկումն Արշակունի հարստության», «Ասպատակությունք...» ողբերգություններում և «Տիգրան Բ-ի» երկու մասերում՝ բխում է պատմականությունից: